

ԱՐՄԻՆ ՎԵՐՆԵՐ
(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Ռ. Գ. ՄԱՀԱԿՅԱՆ, Լ. Կ. ՄԵԼԻՔ-ՕՂԱՆՋԱՆՅԱՆ

Հայ ժողովուրդն իր պատմության ամենաեղբրական օրերին մենակ չմընաց, ունեցավ նաև բարեկամներ տարբեր երկրներում: Շատ չէին նրանք, քայքայ զգնիվ էին, անշահախնդիր ու վեհ: Ամենամիտքալ բարեկամների մեջ իր տիրույն տեղն ունի գերմանացի հայտնի գրող և բանաստեղծ, էքսպրեսիոնիզմի առաջին սերնդի ներկայացուցիչ, հրապարակախոս, հակաֆաշիստ, հումանիստ Արմին Թեոֆիլ Վեգները: Մի մարդ, որի լուսանկարների ջնորհիվ հայտնի դարձան եղեռնի զարհուրելի տեսարանները՝ երիտթուրքերի կազմակերպած ահաբեկիչ ոճի զաստատող անհերքելի փաստերը:

Արմին Թեոֆիլ Վեգները ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 16-ին Էլբերֆելդտ-Վոլպերտալ քաղաքում, տոհմիկ պրուսական ընտանիքում: Մանկության տարիները անց է կացրել հայրական հարկի տակ՝ Բեռլին, Գլոգաու-Դյուսելդորֆ, Բրեսլաու քաղաքներում: 1904—1905-ին ապրել է Շլեզվիայի Լանդվիրտում: 1908-ին ավարտել է գիմնազիան Շտրիգաու քաղաքում: Այնուհետև ուսումնասիրել է իրավունք Բրեսլաուում, Ցյուրիխում և Բեռլինում: 1913-ին ստացել է իրավաբանության դոկտորի աստիճան: Այդ տարիներին բազմիցս ճանապարհորդել է Եվրոպայում, Հյուսիսային Աֆրիկայում և Առաջավոր Ասիայում:

Որոնոց խառնվածքը նրան մղել է ամենատարբեր զբաղմունքների: Եղել է բանվոր-բեռնակիր նավահանգստում, պահակ, տնային ուսուցիչ, խմբագիր, թերթերի թղթակից, հոդագործ, հիվանդապահ, ճանապարհորդ՝ մնալով հավատարիմ միայն պոեզիային:

Վեգների բանաստեղծությունների առաջին գրքուկը հրապարակվել է դեռևս դպրոցական տարիներին: Նրան ճանաչում բերեցին «Արձակ բանաստեղծություններ» և «Քաղաքների դիմապատկերը» (Բեռլին, 1910, 1917) ժողովածուները:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վեգները զորակոչվում է բանակ, ծառայում է սկզբում արևելյան ռազմաճակատում, այնուհետև Գալիպոլի-Դարդանելում, որպես հիվանդապահ, ապա 1915-ին փոխադրվում է Բաղդադ՝ ֆոն դեր Գուլցի բանակը, որպես Կարմիր խաչի սանիտարական ծառայության սպա և, միաժամանակ, որպես գերմանական թերթերի թղթակից:

Բաղդադի ճանապարհին, Միջագետքի անապատներով անցնելիս, նա ակնհայտես է դառնում հայ ժողովրդի Մեծ Եղեռնին: Ցնցված տեսածով, Վեգները երգվում է մինչև վերջին ջունը պայքարել հայ ժողովրդի արդար դատի համար, ընդդեմ երիտթուրքական ցեղասպան քաղաքականության և այն հովանավորող գերման դաշնակիցների:

Մահապատժի սպառնալիքի տակ նա լուսանկարում է այդ ահավոր տեսարանները. «Վերջին օրերը քաղաքի վրա լուսանկարներ արեցի: Ինձ պատմել էին, որ Ջեմալ փաշան՝ Սիրիայի դահիճը, մահվան սպառնալիքի տակ արգելել է լուսանկարիչ փոխադրման ճամբարները: Ես, եկած, փորակապիս տակ թաքցրած կրում էի սարսափի և բողոքի այդ պատկերները: Մեսքենեի և Հա-

լեպի ճամբարներում ես շատ աղերսագրեր հավաքեցի և թաքցրեցի ուսապարկիս մեջ՝ Կոստանդնուպոլսի ամերիկյան հյուպատոսարան հանձնելու համար, քանի որ փոստը դրանք չէր առաքի... Նա լի էի այն գիտակցությամբ, որ ինչ-որ չափով օգնում եմ այդ թշվառներին (Ա. Վեգներ, «Տունդարձի 40 օր ու գիշեր» օրագրից)։

Իր ստացած ծանր տպավորությունների մասին նա պարբերաբար նամակներ և հոդվածներ էր ուղարկում Գերմանիա։ Դրանցից հետագայում կազմվեց հայտնի «Der weg ohne Heimkehr» («Անդարձ ճանապարհ», Բեռլին, 1919) գիրքը։

Թուրքական կառավարությունը պահանջում է նրան վտարել Թուրքիայից։ Դրան զուգահեռ ծանր հիվանդությունը (տիֆ) առիթ հանդիսացավ զորացրելու Վեգներին։ Նա վերադառնում է Գերմանիա, հետը բերելով Եղեռնի տեսարանների բազմաթիվ լուսանկարներ, հոդվածներ, պատմվածքներ՝ ապրածի ու տեսածի գեղարվեստական արտացոլումները։ Գերմանիայում նրան արգելեցին գրել հայերի մասին։

1920-ական թթ. Վեգները ծավալում է բուռն խաղաղասիրական գործունեություն։ Մասնակցում է «Մտավոր և ֆիզիկական աշխատավորների» առաջին համաժողովին։ Նրա ելույթները աչքի են ընկնում հակաֆաշիստական, ինտերնացիոնալիստական, հակամիլիտարիստական ոգով։

Այդ տարիներին տարվելով սոցիալիստական գաղափարներով, նա տարբեր պարբերականներում հանդես է գալիս հեղափոխական հրապարակախոսություններով և հոդվածներով։ Հրատարակում և խմբագրում է «Der Osten» հանդեսը, որին աշխատակցում են ամենաառաջադիմական գրողները (Հայնրիխ Մանն, Ստեֆան Յվայգ, Արնոլդ Յվայգ, Կուրտ Հիլլեր և ուրիշներ)։

1927 թ. սովետական կառավարության հրավերով Վեգները իր կնոջ՝ արձակագիր Լոլա Լանդաուի հետ, ի թիվս արևմտաեվրոպական առաջադեմ գրողների, դալիս է Մոսկվա՝ մասնակցելու Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ տարեդարձի տոնակատարությանը։

Վեգները 1925—1933 թթ. ճանապարհորդել է Իսպանիայում, Պարսկաստանում, Արաբիայում, Պաղեստինում։ Այդ ճանապարհորդությունների արդյունքն են «Am Kreuzweg der Welten» (1931), «Maschinen im Marchenland» (1932) և «Jagd durch das tausendjahrige Land» (1932) գրքերը։

1930-ական թթ. սկզբին Վեգները հարում է գերմանական գրականության և արվեստի ձախ ճակատին. նրա անունը կարդում ենք պրոլետարական հեղափոխական գրողների ընտրական կոչի տակ։

1933 թ. ապրիլին, արդեն ֆաշիզմի օրերին, Վեգները բաց նամակ է ուղղում Հիտլերին, հրեաների հալածանքներին վերջ տալու պահանջով։ Դրա հետևանքն է լինում՝ յոթ բանտ, երեք համակենտրոնացման ճամբար, ռաբբիական ճամբար և փախուստ ու տարագրում օտար երկրներ։ Վերջինս ձերբակալվեցին Բեռլինի մոտ գտնվող իմ վրանում, ես գրում էի իմ վեպի այն գլուխը, որտեղ նկարագրվում են թուրքական բանտում մի հայի տանջանքները, որոնք հետո համարյա բառացիորեն ինձ վրա պետք է զգալի»,—գրում է նա Կ. Մելիք-Օհանջանյանին ուղղած 1963 թ. սեպտեմբերի 14-ի նամակում։

Երկար ժամանակ Անգլիայում, Ֆրանսիայում թափառելուց հետո նա հաստատվում է Իտալիայում, ավստրիացի գրող Պերսի Էքշտայնի անվան տակ, վերցնելով իր հանկարծամահ եղած բարեկամի անունը։ Հոլանդուհի մեկենասի միջնորդությամբ Վեգներ-Էքշտայնը գերմաներեն լեզվի դասեր է վարում Պադուայի համալսարանում։

Հիտլերի Իտալիա այցելելու ժամանակ նա նորից է ձերբակալվում։

Վեգների անունը գրանցվել էր ֆաշիզմի օրոք հրատարակված «Արգելված և հրի մատնված» խորագիրը կրող ցուցակ-գրքույկում՝ 250 ականավոր գրողների, գիտնականների ու հասարակական գործիչների անունների շարքում, որպես «տարագրված և աքսորում մահացած»։ Դա է պատճառը, որ պատերազմից հետո նրան Գերմանիայում համարում էին մեռած։

1947 թ. կալացած գերմանական գրողների հետպատերազմյան առաջին համաժողովում Վեգների անունը՝ գրված մարմարյա ընդհանուր հուշատախտակի վրա, բարձրաձայն արտասանվեց ֆաշիզմի զոհ գրողների հոգեհանգրստի ժամանակ, ընդ որում ինքը՝ Վեգներ-էքշտայնը ծպտված ներկա էր այդ հոգեհանգստին։ Ուստի Վեգները չվերադարձավ Գերմանիա և հաստատվեց Իտալիայում (Հռոմում և Ստրոմբուլի կղզում՝ իր ամառանոցում), շարունակելով ստեղծագործել։ Այդ շրջանում նա գրել է պատմվածքներ, էսսեներ, հոդվածներ, բազմաթիվ նամակներ, հուշեր։

Արմին Վեգները պատկանում է գերմանական էքսպրեսիոնիզմի առաջին սերնդի ձախ թևին։ Նրա ստեղծագործությունն պաթոսն է՝ մարդասիրությունը, մարդկայնությունը, սոցիալական արդարությունը, եղբայրությունը, պայքարը մարդու և ազգերի հալածանքի դեմ։ Իր ողջ կյանքում նա հավատարիմ մնաց պատանեկությանից դավանած այդ գաղափարներին։ Վեգների ստեղծագործությունը աչքի է ընկնում զարմանալի գաղափարական միասնությունամբ։

Նրա գրական ժառանգությունը մեծ է և բազմազան. չափածո և արձակ բանաստեղծությունների ժողովածուներ, պատմվածքներ, վեպեր, էսսեներ, ճանապարհորդական ուղեգրություններ, հրապարակախոսական հոդվածներ։

Առաջին իսկ գրական ստեղծագործություններով Վեգները գերմանական գրականության մեջ ներմուծեց նոր թեմա՝ ժամանակակից մեծ քաղաքի թեման։ Պոեզիայի առարկա դարձավ մեծ քաղաքը իր բոլոր դրական և բացասական կողմերով։ Նրա մեկը մյուսի հետևից հրատարակված բանաստեղծական ժողովածուները՝ «Երկու քաղաքների միջև» (1909), «Լսիր ինձ Աննա Մարիա» (1912), «Քաղաքների դիմապատկեր» (1917, վերջինս արգելվեց, Վեգները մեղադրվեց բարոյականության խախտման մեջ), «Հազար նպատակների փողոցը» (1924) բուռն վեճեր առաջացրին և նրան հուշակեցին որպես «մեծ քաղաքի քնարերգու»։ Նույն թեման արտացոլվեց նաև Վեգների «Խոստովանություն» և «Մոնի, կամ աշխարհը ներքևից» (1926) հայտնի վեպերում։

Գրողի ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում ճանապարհորդական ուղեգրությունները. «Արձակ բանաստեղծություններ», «Էսքիզներ հայրենիքից և ճանապարհորդություններից» (1910), «Աշխարհների խաչմերուկում» (1929), «Պատվի առնել» (1930, տպավորություններ Սովետական Ռուսաստանից և Հայաստանից), «Մեքենաները տափաստանում» (1932), «Որս հազարամյա երկրում» (1932)։ Նա կողմնակի դիտող չէ և ապշեցնում է նկարագրած երկրների կյանքի իմացությամբ, զարմանալի սուր դիտողականությամբ, նկարագրածի համաչափությամբ, փայլուն ոճով և գեղարվեստականությամբ։

Վեգների ստեղծագործության մեջ հատուկ տեղ է գրավում արևելյան, մասնավորապես՝ հայկական թեման, որը 1915-ից մինչև կյանքի վերջը դառնում է նրա համար հիմնականներից մեկը։ «Երանության տունը», «Պատանի



Հուսենք» (թուրքական նովելներ), «Անդարձ ճանապարհը» ժողովածուներում զետեղված են նովելներ, նամակագրություններ Արևելքից: Նա առաջինը գերմանական գրականության մեջ ներկայացրեց Արևելքը ճառանց վարդապետուն երանգավորման» (Ս. Յվայ): Արևելյան նովելների ոճը, գեղարվեստական արժանիքները բացառիկ են ժամանակի գերմանական գրականության մեջ: «Անդարձ ճանապարհը» մարդկային մեծ սիրո երգ է: Այդ սերը դեպի խոշտանգվածները Վեգներին դարձնում է մարտնչող գրող, հրապարակախոս, հայոց ճակատագրի պաշտպան: Իզուր չէ, որ նրան կոչում էին «մարդկության հրապարակախոս-պաշտպան»: Հայերին նվիրված երկեր են. «Bankier» («Բանկիր»), «Der Sturm auf das Frauenbad» («Կանանց բաղնիքի գրոհը»), «Elner armenischer Mutter» («Հայ մորը»), «Die Austreibung der Menschheit» («Տարագրում»), «Der Schrei vom Ararat» («Ժիչ Արարատից»), «Der Feuerkugel» («Հրե գունդը»), «Der gute Licht» («Բարի լույս»), «Fünf Finger über dir» («Պատվի առնելը»):

Վեգների երկերից հայերեն թարգմանվեց «Բարի լույսը» և «Հայ մորը»: Ռուսերեն Վեգների երկերից թարգմանված է երկու նովել՝ «Օսման» և «Կանանց բաղնիքի գրոհը», և մի հատված Վ. Վիլսոնին ուղղված ռաց նամակից (տե՛ս «Геноцид армян в Османской империи» (1982) գրքում, էջ 480—482):

Վեգների ստեղծագործությունը բազմիցս արժանացել է բարձր գնահատականի: Ինչպես արտահայտված գաղափարների, այնպես էլ ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքների շնորհիվ նա դասվել է ժամանակի ականավոր գրողների շարքը, որպես ճեփռուպական մասշտաբի բանաստեղծ, մի անձնավորություն, որը «պատկանում է ողջ աշխարհին»:

Արմին Վեգները, սակայն, առավել թանկ ու հարազատ է մեզ իր հայապաշտպան ազնիվ ու անշահախնդիր գործունեությամբ: Կես դարից ավելի Արմին Վեգները մոտիկից հետաքրքրվում էր հայ ժողովրդի կյանքով, ապրում նրա ճակատագրով, խորհում նրա անցյալի ու ներկայի մասին՝ պատկերելով այն իր բազմաթիվ ստեղծագործություններում:

Հումանիստ գրողի առաջին հանդիպումը հայերին տեղի ունեցավ Միշպետքի անաշատներում, ուր ռևանզադիվել էին արևմտահայության այն բեկորները, որոնց իթթիհատական մարդասպանները տեղում չէին ոչնչացրել՝ դատապարտելով տանջալից «դանդաղ մահվան»: Արմին Վեգները, այդ ազնվագույն հոգու ու մեծ խղճի տեր մարդը, չէր կարող անտարբեր դիտել ամբողջ մի կուլտուրական ժողովրդի ողբերգությունը, չէր կարող չընդվզել անմարդկային ոճրի հեղինակների դեմ: Եվ նա գրեց կատարվածի մասին, լուսանկարեց զարհուրելի տեսարաններ, ֆաշիստական բարբարոսություններին նախորդած պատկերներ, ցասման ու բողոքի իր ձայնը բարձրացրեց, սակայն Թուրքիայի դաշնակից կազմերական Գերմանիայի մամուլը տեղ չտվեց Գերմանիայի ազնիվ զավակի բողոք-թղթակցություններին, իսկ հայրենիք վերադառնալուց հետո կառավարությունը փորձեց լռեցնել իր անհանգիստ հայրենակցին: Սակայն հեշտ չէր լռեցնել Արմին Վեգներին, ամեն մի անարդարության դեմ ընդվզող գրողին: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ Օսմանյան կայսրությունը և նրա դաշնակից Գերմանիան խայտառակ պարտություն կրեցին, Արմին Վեգները բուռն գործունեություն ծավալեց՝ իր հայրենակիցների ու միջազգային հասարակայնության ուշադրությունը հրավիրելով հայ ժողովրդի հանդեպ գործադրված զանգվածային ցեղասպանության վրա, պահանջելով մերկացնել ու դատապարտել միջազգային չարանիշի այդ հանցագործության պատասխանատուներին:

1919 թ. հունվարին Արմին Վեգները Բեռլինի «Ուրանիա» թատրոնում (ինչպես նաև Գերմանիայի այլ քաղաքներում) հանդես է գալիս «Հայ ժողո-

վերդի տարագրությունը անապատ թեմայով դասախոսությունը՝ ակնառեսի իր վկայությունները ուղեկցելով իր խսկ կողմից նկարահանված սարսափազդու տեսարաններով: «Գերմանացիներ», — սկսում է նա իր զեկուցումը, — այն իրադարձությունները, որոնց մասին ես ուզում եմ այսօր ձեզ պատմել, և ձեզ այստեղ հրավիրելու պատճառը մահվան պատմություն է: Հայ ժողովրդի դժբախտությունները և այն ահավոր տառապանքները, որոնց միջով նա անցավ այս տարիներին, նմանը շունեն ներկա պատերազմում, թերևս առհասարակ մարդկության պատմության մեջ: Վեգների դասախոսությունը ցնցող տպավորություն է թողնում Հասարակության վրա, լայն արձագանք գտնում մամուլում: Ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը վերհիշում է, որ Ա. Վեգների այդ դասախոսության ժամանակ, երբ նա մոգական լապտերով ցույց էր տալիս իր նկարահանած պատկերները, «Հասարակության մեջ առաջ եկավ ցասում՝ դեպի բարբարոս երիտթուրքերը»: Հիշյալ դասախոսությունն ավելի ընդարձակ ծավալով լույս է տեսնում առանձին հրատարակությամբ:

Նույն 1919 թ. հունվարին Արմին Վեգները գրում է իր հռչակավոր «Բաց նաժակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին հայ ժողովրդին անապատ աքսորելու մասին» ուղերձը, որը արևմտահայության Գողգոթայի խտացված, անկրկնելի նկարագրությունն է օտար ակնառեսի կողմից: «Բաց նաժակը» լույս տեսավ ինչպես առանձին բրոշյուրով, այնպես էլ «Բեռլինի տագնալում» օրաթերթում, որից արտատպվեց Գերմանիայի ու Շվեյցարիայի մի շարք ազդեցիկ թերթերում, ինչպես նաև թարգմանվեց ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն և այլ լեզուներով:

Հումանիստ գրողի հայապաշտպան այդ փաստաթուղթը հրապարակվեց այն պահին, երբ Փարիզում իր աշխատանքներն էր սկսում Հաշտության վեհաժողովը, և Արմին Վեգները դիմելով «Մեծ քառյակի» (ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա) ղեկավարներից մեկին, անհիմն լավատեսություն էր տածում, թե իբրեւ եվրոպական մեծ տերությունները կարող էին գործնականորեն օգնություն ցույց տալ ցեղասպանության զոհ դարձած արևմտահայությանը, «որովհետև աշխարհի և ոչ մի ժողովուրդ անարդարացի կերպով այնքան չի տառապել, որքան հայ ազգը»: Հայկական հարցն անվանելով «համայն մարդկության հարցը», Արմին Վեգները դեռ հավատում էր, թե իբրեւ փոքր ժողովուրդների ճակատագիրը տնօրինող մեծ տերությունները կարող էին անհաճանդիր ձեռք մեկնել այդ ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «այստեղ մեր առջև կանգնած է բարձր քաղաքակրթության հասած մի ժողովուրդ, որի ծառայություններն արվեստին, գրականությանն ու գիտությանը երբեք չեն կարող մոռացվել, մի ազգ, որը տվել է բազմաթիվ երևելի ու մտածող մարդիկ...»: Զանալով շարժել «խաղաղասերի» ու «հաշտարարի» համբավ հանած Վիլսոնի գույքը, Ա. Վեգները իր նամակում ներկայացնում է բռնագաղթի ենթարկված բյուրավոր կանանց, ծերերի ու երեխաների անմարդկային վիճակի զարհուրելի տեսարաններ, թուրք դահիճների կողմից նրանց դեմ կիրառված դաժանությունների ծանր պատկերներ: «Պաշտոնական անձինք», — գրում է նա, — զինվորական սպաները, ասքյարները, մահմեդական հոգևորականները մրցում էին իրար հետ՝ իրենց վայրենի ու արյունոտ խրախճանքներում: Դպրոցներից դուրս էին քաշում որբացած քնքուղ օրիորդներին՝ իրենց անասնական տոփանքին հագուրդ տալու համար, մահակի հարվածներ տեղում մահացող կամ ծննդաբերող կանանց գլխին, որոնք հազիվ կարողանում էին քարշ գալ՝ մինչև որ կընկնեին ճանապարհին ու կմահանային՝ իրենց տակի փոշին վերածելով արյունախառն ցեխի: Այդ տեղերով անցնող ճանապարհորդները շրջում էին սարսափով լի իրենց աչքերը սատանայական դաժանությամբ քշվող այդ ամբոխից»:

Նկարագրելով տառապյալ ազգի նահատակությունը, Վեգները միաժամանակ ընդլզում էր Եղեռնի իրողությունը ժխտողների կամ կատարվածը որևէ կերպ արդարացնողների դեմ:

«Ամեն ոք, ով ծանոթ է այս պատերազմի իրադարձություններին Անատոլիայում, ով հետևել է այդ ազգի բախտին բաց աչքերով, գիտի, որ այն բոլոր մեղադրանքները, որոնք խարդախորեն ու ճարպկությամբ հարուցվել էին հայ ժողովրդի դեմ, սոսկ նրա անբարեխիղճ բռնակալների կողմից սարքված նողկալի հերյուրանքներ են, որոնք կոչված են նրանց պաշտպանելու իրենց խելացնոր ու դաժան գործողությունների հետևանքներից և քողարկելու իրենց իսկ անկարողությունը հաշվի նստելու անկեղծության ու մարդկայնության ոգու հետ»։ «Բայց եթե նույնիսկ այդ բոլոր մեղադրանքները խարսխված լինեին ճշմարտության վրա,—շարունակում էր Ա. Վեգները,—դրանք երբեք չեն կարող արդարացնել այն դաժան գործողությունները, որ նրանք ձեռնարկեցին հարյուր հազարավոր անմեղ մարդկանց դեմ»։

Արմին Վեգները վերին աստիճանի արդարամիտ էր, խղճի, արդարության ու ճշմարտության մարմնացում կարծես, ուստի նա հախուռն չէ իր մեղադրանքներում. «Ես չեմ մեղադրում Թուրքիայի հասարակ մարդկանց, սակայն ես չեմ կարծում, որ կառավարող դասակարգի ներկայացուցիչները պատմության ընթացքում երբևիցե ընդունակ լինեն իրենց երկիրը երջանիկ դարձնելու, որովհետև նրանք մեր մեջ սպանեցին հավատը քաղաքակրթության հասնելու իրենց ունակության հանդեպ»։

Ա. Վեգները առաջիններից մեկն էր, որ բարձրացրեց Եղեռնի զոհերին փոխհատուցում տալու հարցը. «Հազարավոր հայերի ուժով ստիպեցին մահ-մեղական դավանանք ընդունել, հազարավոր տղաներ ու աղջիկներ առևանգվեցին, հազարավոր կանանց տարան ստրկուհիներ դարձնելու թուրքական հարձակումներում։ Սրանց բոլորին պետք է կատարյալ հավաստիացում տրվի, որ նրանք ազատություն կստանան։ Հետապնդումների բոլոր զոհերը, որոնք վերադարձել են իրենց տները ավելի քան երկու տարի անապատում անցկացնելուց հետո, պետք է փոխհատուցում ստանան կորսված ունեցվածքի դիմաց, պետք է հոգ տարվի բոլոր որբերի մասին։ Այն, ինչի կարիքն այդ մարդիկ զգում են, դա սերն է, որից նրանք այնքա՛ն ժամանակ զրկված են եղել։ Դա մեզ բոլորիս համար մեղքի խոստովանություն է»։

Արևմուտքի տերությունները, սակայն, հեռու էին արևմտահայությանը նյութական կամ բարոյական փոխհատուցում տալու գաղափարից։ Նրանք իրենց առանձնահատուկ շահն էին հետապնդում փրկված Օսմանյան կայսրությունում։ Ավելին։ Նրանցից և ո՛չ մեկը չմտահոգվեց ի կատար ածել տալու հայկական Եղեռնի զլխավոր պատասխանատուների նկատմամբ Ստամբուլի թուրքական ռազմական ատյանի կողմից կայացված դատավճիռը։ Եվ ժողովրդական վրիժառուներն էին, որ հանձն առան իթթիհատական հանցագործների արժանին հատուցելու առաքելությունը, և արյունարբու Թալաաթ փաշային սպանող Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը Բեռլինում օրինաչափորեն վերածվեց Թալաաթ փաշայի ետմահու դատավարության։ Բնական է, որ Արմին Վեգները չէր կարող սոսկ ունկնդրի դերում լինել։ Նա ներկայացավ 1921 թ. հունիսի 2—3-ին Բեռլինի նահանգալիք դատարանում տեղի ունեցած դատին որպես վկա, ապա նույն 1921 թ. գործուն մասնակցություն բերեց այդ դատավարության սղագրությունը հրապարակ հանելուն և գրեց հայկական Եղեռնը դատապարտող այդ փաստաթղթի փայլուն առաջաբանը՝ «Արդար վճիռ» խորագրի տակ։

1922 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Զմյուռնիայի կոտորածներին մեծ հումանիստը արձագանքեց «Ժիշ Արարատից» խորագրի կրող հոդվածով։

«Դո՛ւք, ժողովրդի ծառաներ։

Փոքր Ասիայի լեռներից կրկին մեր ականջին է հասնում սարսափի ճիչը։ Այն ժամանակվանից սկսած, երբ երիտթուրքական կառավարությունը ահավոր որոշում ընդունեց հայ ազգաբնակչությունը ոչնչացնելու, այդ երկիրը շարունակ ենթարկվում է հարձակումների և սուղված է կրակի և արյան մեջ։

Փախստականների վերջին մնացորդները տունդարձի ճանապարհին խաբուկյամբ զրկվեցին իրենց աղքատացած հողակտորից...

Իսկ ի՞նչ արեցին Արևմուտքի հաղթական տերությունները իսպառ բնաջնջումից պաշտպանելու իր հավատի և ողու համար նահատակված այս փոքր ժողովրդին: Թույլ կտա՞ք հիշեցնելու ձեզ, այդ պետությունների գլուխը կանգնածներին, հանդիսավոր այն խոստումները, որ պատերազմի ժամանակ, որպես երաշխիք էիք տվել Հայաստանին: Թույլ կտա՞ք մեկ անգամ ևս ձեզ և աշխարհին լսեցնելու այն խոսքերը, որ Կլեմանսոն՝ Ֆրանսիական վարչապետը՝ 1918 թ. հուլիսի 14-ին ուղղեց Հայաստանին, հայտարարելով, թե դաշնակից կառավարությունները միշտ իրենց պարտքը կհամարեն այս երկրի ճակատագիրը տնօրինելու ըստ բարձրագույն մարդկայնության և արդարության օրենքների: Եվ մի՞թե օղբ դեռ լի չէ Պուանկարեի խոսքերով, որ նա գրել էր Կիլիկիայի կաթոլիկ հայերի պատրիարքին: Խոսքեր, որ շուտով ցնդեցին նրա հիշողությունից: ...Որքան հպարտ անուններ, որոնք շքեղ հագուստների երթ կազմած, անցնում են մեր կողքով, թողնելով ոչ այլ ինչ, քան միայն դատարկ արձագանքի քրքիչը հիասթափված սրտերում:

Եվ ի՞նչը եղավ այդ հանդիսավոր խոստումների արդյունքը, որոնք հաջորդեցին իրար, ինչպես սուրբ խաչակրաց արշավանքի ավետումներ: Նոր կողոպուտներ, սով, սպանդ: Պատերազմի արյունալի իրադարձություններին գումարվեցին 1918 թ. Ղարաբաղիսայի և Ալեքսանդրապոլի կոտորածները, 1921-ին՝ Փամբակի ու Սամսունի սարսափները, 1922 թ. վերջին կոտորածները և աքսորները Անգորայի մարզում: Զէ՛ որ Սևրի պայմանագրի ընդունած ողորդումները չէին պահպանվում նույնիսկ նրանց կողմից, ովքեր թուրք ժողովրդին պարտագրել էին այդ օրենքը... Հայ և սիրիացի քրիստոնյաների ոչնչացմանը անմիջապես հաջորդեց հույն բնակչության բնաջնջումը... Նրանց տեղափոխեցին անմարդաբնակ մի կղզի, որտեղ նրանք քաղցից ու ծարավից ոչնչացան: Չմյուռնիսան այրվեց հիմնովին: Միջերկրական ծովի այդ փայլուն քաղաքը, հարստությունը և գանձերը, որոնք քրիստոնյաները իրենց ջանասիրությամբ կուտակել էին դարերի ընթացքում, վերածվել են ծխացող մոխրակույտի: ...Մարդկային երեկակայությունը ի վիճակի չէ պատկերացնելու այն տառապանքները, որոնց մատնված էին փախստականների ամբոխները այրվող և թշնամուց պաշարված քաղաքներում:

1927 թ. Վեգները Սահակ Տեր-Գաբրիելյանի միջնորդությամբ այցելում է Հայաստան, այստեղ մնում մեկ ամսից ավելի՝ ուսումնասիրելու համար վերածնված Հայաստանի մշակութային և տնտեսական վերելքը, նյութեր է հավաքում հայերին նվիրված եղբրեղության համար, որը պետք է ընդգրկեր 1894—1920-ական թթ. հայ կյանքը: Պետական համալսարանում նա կարդում է մի քանի դասախոսություն գերմանական նոր պոեզիայի և հին Հունաստանի թատրոնի և թատերգության մասին: Նա միառժամանակ ապրում է պրոֆ. Հակոբ Զորյանի և նրա կնոջ տանը, որոնց հետ մտերմացել էր դեռևս 1920—1921 թթ. Բեռլինում՝ Թալաթ փաշայի դատավարության ժամանակ: Իսկ նրա մտերմությունը Կարապետ Մելիք-Օհանջանյանի հետ վերաբերում է 1918—1920 թթ.՝ երբ վերջինս ուսանում էր Բեռլինում: Վեգները իր տպավորությունները հրատարակում է առանձին գրքով՝ «Պատվի առնել» (1930):

«Հայերի արտաքսումից հետո անցել է 12 տարի, բայց երբ նայում եմ նրանց սև բաճկոններին, լուրջ, գուսպ դեմքերին, ինձ թվում է, թե նրանք հենց նոր են թողել իրենց սարսափների գերեզմանը անապատում»,—գրում է նա իր օրագրում (10 հոկտեմբերի 1927 թ.):

1963 թ. վերականգնվեց Վեգների կապը Սովետական Հայաստանի հետ: 1966 թ. Արտասահմանյան երկրների հետ բարեկամության հայկական ընկերությունը հանդիսավոր նշեց Վեգների 80-ամյակը: Հրատարակվեցին հոգնածներ: 1968 թ. սեպտեմբերին Վեգներն իր երկրորդ կնոջ՝ նկարչուհի Իրենա Կավալիսկա-Վեգների հետ նույն ընկերության հրավերով այցելեց Հայաստան, հանդիպումներ ունեցավ գրողների, գիտնականների, հասարակական գործիչների հետ, ելույթ ունեցավ Երևանի պետական համալսարանում: Մինչև կյանքի վերջը Վեգները հետաքրքրվում էր Հայաստանով, հայերով, հանդես էր գալիս

Հայաստանին և հայերին նվիրված զեկուցումներով, հոգվածներով, էսսեներով, հուշերով:

1965 թ. ապրիլին նա «Նաիրի» թերթի (Բեյրութ) միջոցով դիմեց հայ ժողովրդին «Բարի լույս» ողջունի ուղերձով, որը արաառուվեց շվեյցարական «Weltwoche» և Լոնդոնի «Արեգակ» թերթերում՝ անգլերեն:

1972-ին 86-ամյա ծերունին ԱՄՆ-ի տարրեր քաղաքներում զեկուցումներ կարդաց հայ ժողովրդի անցյալի և Սովետական Հայաստանի բարգավաճման մասին: Արմին Վեգները վախճանվեց 1978 թ. մայիսի 17-ին, Հոռմում:

АРМИИ ВЕГНЕР

(К 100-летию со дня рождения)

Р. Г. СААКЯН, Л. К. МЕЛИК-ОГАНДЖАНЫ

Резюме

В статье изложены основные вехи многогранной литературно-общественной деятельности прогрессивного немецкого писателя-антифашиста Армина Теофила Вегнера. Поэт, романист, автор страстных публицистических статей и очерков, А. Вегнер всю свою долгую жизнь посвятил борьбе за справедливость, выступая в защиту угнетенных народов, гневно осуждая человеконенавистничество, все и всяческие формы насилия—расизм, оголтелый шовинизм, нацизм и фашизм. Находясь на военно-санитарной службе в Османской империи в 1914—1917 гг., А. Вегнер стал непосредственным очевидцем геноцида западных армян и осудил это преступление в своих публичных выступлениях в Берлине и других городах Германии в 1919—1921 гг., выступил свидетелем на судебном процессе в Берлине в июне 1921 года в связи с убийством кровавого палача Талаат-паши, написал свое знаменитое «Открытое письмо президенту США Вудро Вильсону», тщетно добиваясь наказания всех виновников массовой резни армян. Он написал ряд исторических и художественных очерков, романов и рассказов, посвященных трагической участи западных армян в годы первой мировой войны: «Дорога без возврата», «Армениада», «Крик с Арарата», «Армянской матери» и т. д. После прихода Гитлера к власти А. Вегнер развивает антифашистскую деятельность, выступает против преследования евреев, написав открытое письмо Гитлеру, за что подвергается пыткам. Бежав из заключения и чудом уцелев, Вегнер поселяется в Англии, а после окончания второй мировой войны—в Италии.

А. Вегнер дважды посещал Советский Союз—в 1927 г., когда он в числе прогрессивных писателей Запада был приглашен на празднование 10-летия Великой Октябрьской социалистической революции, и второй раз—уже в преклонном возрасте—в 1968 году. Находясь в Советской Армении, Армин Вегнер приветствовал ее успехи в социалистическом строительстве.

Умер Армин Вегнер в 1978 г. в Риме.